ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՎԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՀԵՌԱԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սրտանց շնորհավորություններ Ձեր անվանակոչության տոնի առթիվ: Հիվանդությունս դանդաղորեն ապաքինվում է:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհիդ անվան տոնախմբության առթիվ, ընդունեցեք մեր և ընդհանուր կրոնական-վարչական ժողովոց, եկեղեցական դասուն, բոլոր խորհուրդներու և ժողովրդյան սրտագին շնորհավորանքներն ու արհշատության մաղթանքները:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Իմ, Սրբոց Հակոբյանց միաբանության և հայոց համայնքի անունեն պատիվ ունիմ հայտնելու Ձերդ Վեհափառության մեր սրտագին ցանկությունները՝ Ձերդ երջանիկ անվանակոչության տարեդարձի առթիվ:

Կաղոթենք Ամենաբարձրյալին՝ Ձերդ Վեհափառության պարգևե առողջություն և երկար կյանք, Ձերդ Վեհափառությունը պահպանե Մայր Աթոռի գլխին, արհշատություն շնորհե Մայր Հայրենիքին:

Պատրիարքական տեղապահ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԻՆ

ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ, ԲԵՅՐՈՒԹ

Գոհունակությամբ ստացանք Ձեր շնորհավորականը և հանույքով ողջունում ենք Մենք և միաբանությունը Ձեր հնտզհետև պաշտոնումը:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՈՐԳ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՆԱԵՎ՝

Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմի առաջնորդ՝
գերաշնորհ տեր Սուրեն եպիսկոպոս Թորոսյանից,
Բաքվից.—Ադրբեջանի հայոց թեմի թեմական խորհուրդից,
Թբիլիսիից.— Վրաստանի հայոց թեմական խորհուրդից,
Կահիրեից.— Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ՝
գերաշնորհ տեր Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանից,
Նյու-Յորքից.—Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ՝
գերաշնորհ տեր Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանից,
Իրանից.—Իրանի հայոց թեմերի թեմական խորհուրդներից,
Ֆրեզնոյից.—Կալիֆորնիայի հայոց թեմի առաջնորդ՝
գերաշնորհ տեր Վարդան արքեպիսկոպոս Գասպարյանից,
Բուխարեստից.— Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ՝
գերաշնորհ տեր Վազգեն եպիսկոպոս Պալճյանից,
Երևանից.— Արարատյան թեմի թեմական խորհուրդից,
Լենինականից.— Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ՝
հոգեշնորհ տեր Գարեգին ծայրագույն վարդապետ Հակոբյանից,

ինչպես և Մայր Հայրենիքի, Սովետական Միության և Սփյուռքի այլ բնակավայրերից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, հասարակական կազմակերպություններից և անհատ հավատացյալներից:

Վեհափառ Հայրապետը, հայտնելով իր գոհունակությունը ստացված շնորհավորությանց առթիվ, տալիս է իր օրհնությունը վերոհիշյալներին:

Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի՝

ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

Սիոն եպիսկոպոսին կարգում ենք Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ: Այս մասին հայտնված է իրեն: Կոնդակը կուղարկվի:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՈՐԳ Զ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Հայր,

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Կեդրոնական վարչական խորհուրդս հանույրով ստացավ Ձերդ Վեհափառության հոկտեմբեր 11 թվահամարով հեռագիրը, Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանին Հարավային ամերիկահայոց հայրապետական պատվիրակ կարգել հանած ըլլալնուդ առթիվ:

Կեդրոնական վարչական խորհուրդս իր անկեղծ շնորհակալություններն ու երախտագիտությունը կհայտնե սույն կարդագրության համար:

Մատչելով ի համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն,

Մնամք որդիական ակնածանոք և հարգանոք՝

Հ. Ա. Ե. Հ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՓԱՐԻԶԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՀՈԳԵԼՈՒՅՍ ԱՐՏԱՎԱԶԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՐ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Տեր,

Ստացանք Ձերդ Վեհափառության 9 հոկտեմբեր 1951 թվակիր հեռագիրը, որ մեծ սփոփանք մը եղավ հավատացյալ ժողովրդին:

Հանգուցյալ սրբազան հոր դագաղը երկու շաբաթ մնաց եկեղեցիին մեջ: Բազմաթիվ փարիզահայեր ամեն օր կուգային իրենց հարգանքն ու մեծարանքը հերկայացնելու:

14 հոկտեմբեր կիրակի առավոտ, հոծ բազմության մը ներկայության, տեղի ունեցավ քառաձայն Ս. Պատարագ: Ողբացյալ սրբազանին օծման արարողությունը կատարեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդ գե-

ռաջնորդ տեր Խադ ս. արքեպիսկոպոս Աջապահյան, շրջապատված Բեռլինի հայ գաղութի հովիվ տեր Գրիգորիս ծ. վարդապետ Շահլամյանե, Վիեննայի հովիվ տեր Եղիշե վարդապետ Յուրյունյանե, Փարիզի և շրջակայքի եկեղեցիներու վեց քահանա հայրերե, Վալանսի տեր Սահակ ավագ քահանա Պապիկյանե և Մարսիլիո առաջնորդական փոխանորդ տեր Մեսրոպ քահանա Ավետյանե:

Պատարագիչ սրբազան հայրը «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» բնաբանով վեր հանեց ողբացյալի կյանքի գլխավոր գիծերը, շեշտեց անոր անձնուրաց ոգին և դրվատեց անոր մտքի և գրչի արժանիքները:

15 հոկտեմբեր 1951, երկուշաբթի օր ժամը 2.30-ին, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցվույն մեջ տեղի ունեցան հուղարկավորության արարողությունները: Որոշյալ ժամեն առաջ սգակիր ժողովուրդը խուռն բազմությամբ լեցված էր եկեղեցիին բակը և դուռն առջևը:

Եկած էին նաև մեծ թիվով օտար բարձրաստիճան անձնավորություններ. պատգամավորություններ եկած էին Լիոնեն, Վալանսեն, Մարսելեն, Պելֆիֆայեն:

Գերաշնորհ Խադ արքեպիսկոպոս, շրջապատված դարձյալ վարդապետներե և քահանա հայրերե, նախագահեց արարողության և անգամ մը ևս վեր հանեց ողբացյալ սրբազան հոր արժանիքներն ու կարողությունները և բնաբան առնելով «Զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի, այսուհետև կայ մնայ ինձ արդարութեան պսակն», իր խոսքը վերջացուց շնորհակալություն հայտնելով օտար հյուրերու:

Սգավոր ժողովուրդը մեծ բազմությամբ հետևեցավ մինչև գերեզման հոգելույս սրբազանի դագաղին, անոր իր վերջին հարգանքը մատուցանելու համար:

Մարմինը ամփոփվեցավ Բեռ Լաշեզ, եկեղեցվույս դամբարանին մեջ, ողբացյալ Վռամշապուհ արքեպիսկոպոսի քով:

Մատչիմ ի համբույր Ձեր Ս. Աջույն ողիական հարգալիր մեծարանքներով և ակնածանքով:

Փարիզի Կրոնական ընկերակցության վարչության ատենապետ՝
Ս. ՔԱՐՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՈԳԵԼՈՒՅՍ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Եվրոպայի թեմի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանի վաղաժամ և անակնկալ մահը Մեզ խորին վիշտ պատճառեց:

Պատվիրում ենք նորա հիշատակին հանդիսավոր Պատարագ և հոգեհանգիստ կատարել՝ վեր հանելով նորա գրական-բանասիրական, եկեղեցական-ազգային, եկեղեցական-վարչական արժանիքները:

Մաղթում ենք, որ Ս. Հոգին մխիթարիչ հանդիսանա նորա հարազատներին, համայնքին, հոգևորականության և Մեզ:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԳԵՈՐԳ Զ.